

ՈՉ ԻՐԱԴՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՁՈՂՐԱՔ ՁԱՂԱՅԱՆ

Վերջին ժամանակներս լեզվաբանական գրականության մեջ ազատ շրջանառության իրավունք է ստացել հաջորդականության ֆեռականական կարգ հասկացությունը: Ամենից առաջ անհրաժեշտ է պարզել, թե ինչ պետք է հասկանալ հաջորդականությունն ասելով: Խոսքը այստեղ, անշուշտ, ժամանակա-կանական կարգի առանձին ժամանակաձևեր միմյանց հետ ունեն ժամանակային հակադրություններ, որոնք արտահայտվում են հաջորդականությամբ, այսինքն՝ հաշվարկման որոշակի համակարգում հաշվարկման կետ ընդունված պահին համընթացությամբ, նախորդումով կամ հաջորդումով: Այս տեսակետից հետաքրքիր է քննել ժամանակի քերականական կարգի ներկա, անցյալ և ապառնի հիմնական քերականությունների իմաստային հակադրությունները՝ նկատի ունենալով նաև իրական և ընկալական ժամանակների հետ դրանց փոխարարությունները: Քերականական ներկա ժամանակը ձգտում է (→) իրական ներկա պահի հետ առավելագույն համապատասխանություն: Քերականական ներկան իրավացիորեն համարվում է խոսքի պահին համընթաց կատարվող գործողություն: Սակայն ներկա ժամանակը կարող է ունենալ ոճական այլևայլ կիրառություններ, երբ այն չի համապատասխանում իրական ներկա պահին (այժմ)¹, և այս դեպքում այն ներկայանում է իբրև ընկալական ներկա ժամանակի արտացոլում լեզվում: Եթե նկատի ունենանք, որ իրական ներկա պահը ժամանակի հավերժական հոսքում մի անորոշակի կետ է, ապա կարող ենք ասել, որ քերականական ներկա ժամանակը այն է, «որի մի մասը անցյալ է, մի մասն էլ՝ ապառնի»², ինչպես դիպուկ նկատել են դեռևս անտիկ փիլիսոփաները: Քերականական ներկան ժամանակի կարգի հիմնական քերականությունների (անցյալ, ապառնի) համար հաշվարկման կետ է: Անցյալ ժամանակ արտահայտող ժամանակաձևերը նախորդում, իսկ ապառնի ժամանակ արտահայտող ժամանակաձևերը հաջորդում են քերականական ներկա ժամանակին: Ի տարբերություն քերականական ներկայի, քերականական անցյալ և ապառնի ժամանակաձևերով արտահայտված գործողությունները և եղելությունները գրեթե միշտ (եթե զանց առնենք ոճական կիրառությունները), այսպես ասած, «տեղադրվում» են իրական անցյալ և ապագա ժամանակներում: Մի տարբերությամբ՝ եթե իրական ժամանակը ներկայանում է որպես նշույթավորված³ ժամանակ (маркированное время), ապա քերականական ժամանակը զուրկ է այդպիսի հատկությունից: Լեզվում նշույթավորումը կատարվում է այլ միջոցներով. համեմատենք գրել է և գրել է երեկ առավոտյան տասն անց հինգ բռնիք: Դժվար չէ նկատել, որ քերականական անցյալ և ապառնի ժամանակները ևս ընկալական անցյալ և ընկալական ապառնի ժամանակների արտացոլումն են լեզվում:

1 Օրինակ, պատմական ներկա ժամանակի արտահայտությունը հայերենում:

2 «Античные теории языка и стиля», Л., 1936, с. 129.

3 Այստեղ և հետագա շարադրանքում նշույթավորված տերմինը գործածվում է փիլիսոփայական առումով, իսկ ոչ-նշույթավորվածը՝ մոտավորապես պետք է հասկանալ անորոշ իմաստով:

Իրական ժամանակը ներկայանում է որպես հաջորդականությունների մի անվերջանալի շղթա: Շարժումը ժամանակի հիմնական հատկանիշներից է, որն ինքնին ենթադրում է հաջորդում և նախորդում: Սակայն հաջորդում և նախորդում հասկացությունները իմաստավորվում են միայն հաշվարկման որոշակի կետի հարաբերությամբ, որի ընդունումը զուտ պայմանական է: Անցյալը նախորդում է ներկային, ապագան՝ հաջորդում: Իսկ ներկա ժամանակը անորսալիորեն հոսում այժմն է: Քերականական ներկան խոսքի պահն է, որին նախորդում է քերականական անցյալը և նաջորդում՝ քերականական ապագան: Քերականական ժամանակը, լինելով ոչ-նշույթավորված ժամանակ, կարիք է զգում ժամանակային հակադրությունների՝ անցյալի և ապագանի ոլորտներում: Այս դեպքում արդեն անցյալի կամ ապագանի ոլորտների ժամանակաձևերն արտահայտելով նախորդում կամ հաջորդում քերականական ներկա ժամանակին, միաժամանակ կարող են գտնվել նաև հաջորդականության մեկ այլ շղթայում (նախորդման, հաջորդման և համընթացության եզրերում)՝ անցյալի կամ ապագանի ոլորտներում վերցված հաշվարկման կետի նկատմամբ: Ժամանակային այսպիսի հաջորդականությունն էլ որոշ լեզվաբաններ անջատում են ժամանակի քերականական կարգից՝ ընդունելով որպես ինքնուրույն հաջորդականության փեռականական կարգ, բացառելով ժամանակի քերականական կարգում հաշվարկման որևէ այլ կետի ընդունում, բացի խոսքի պահից⁴:

Քննելով ժամանակակից հայերենի վաղակատար և անցյալ կատարյալ ժամանակաձևերի միջև եղած իմաստային հակադրությունները և դրանք զուգադրելով անգլերենի պերֆեկտային ձևերին, Հ. Ասմանգուլյանը գտնում է, որ «վաղակատարի հակադրությունը հայերենի մյուս կերպաժամանակային ձևերին, մասնավորապես անցյալի բայաձևերին, կազմում է բայի նախուկ փեռականական կարգ» և այն «մեծ ընդհանրություն ունի անգլերենի ժամանակային վերաբերության կարգի հետ, որն առաջին անգամ առանձնացրել է Ա. Ի. Սմիռնիցկին՝ անգլերենի պերֆեկտային ձևերի բնութագրման համար»⁵: Այստեղ ևս անցյալի ոլորտի ժամանակաձևերի միջև եղած ժամանակային հակադրությունների, որպես հատուկ քերականական կարգի, առանձնացումը պայմանավորված է ժամանակի քերականական կարգում հաշվարկման մեկ կետի՝ խոսքի պահի, ընդունման սկզբունքով: Հաջորդականության շղթա են կազմում ոչ միայն անցյալի կամ ապագանի ոլորտների առանձին ժամանակաձևերը. հաջորդականության շղթայում են գտնվում նաև ժամանակի քերականական կարգի հիմնական՝ ներկա, անցյալ, ապագանի քերականությունները: Եվ հետո, չէ՞ որ ժամանակային հակադրությունները արտահայտվում են միմյան հաջորդականությամբ՝ հաշվարկման կետի նկատմամբ համընթացության, նախորդման, հաջորդման եզրերի ամբողջությամբ: Լեզուն պայմանականորեն կարող է հաշվարկման կետ ընտրել նաև անցյալի և ապագանի ոլորտներում: Ավելին՝ հաշվարկման կետ կարելի է ընտրել նաև անցյալի ապագանի ոլորտում՝ ինչպես կարելի է ենթադրել Ու. Ս. Բուլլի առաջարկած ժամանակի կարգի համընդհանուր կաղապարից⁶:

Գ. Ջահուկյանը հաջորդականության կարգի մասին ունի ուշագրավ ըմբռնում, որին ժանոթանալուց առաջ անհրաժեշտ ենք համարում նշել նաև ժամանակի կարգի վերաբերյալ նրա տեսակետը: Ժամանակակից հայերենում

⁴ Ի. Բ. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները («Լեզվի և սփյուռք», 4. 2, Երևան, 1964, էջ 173), А. Г. Шанидзе, Новый взгляд на природу спряжения армянского глагола («Труды Тбилисского университета», V, 1965).

⁵ Հ. Ասմանգուլյան, Ժամանակային վերաբերության կարգը անգլերենում և հայերենում (ՀՍՍՀ ԳԱ «Լրագր», 1980, № 9, էջ 54):

⁶ Bull W. E., Time, tense and the Verb, University of California Press, Berkeley and Los Angeles, 1960, p. 14, 18 և այլն.

Գ. Զահուկյանը տարբերակում է իրադրական և ոչ իրադրական ժամանակները: «Իրադրական ժամանակի դեպքում նշվում է հաղորդողի ընտրած համեմատության եղբը՝ խոսելու պահը կամ անցյալում ու ներկայում ընտրված որևէ պահ (ընդգծումը մերն է—Ձ. Չ.)», իսկ «ոչ իրադրական ժամանակը ցույց է տալիս պարզապես ժամանակային հաջորդականություն՝ անկախ հաղորդողից»⁷: Քննելով ոչ իրադրական⁸ ժամանակի արտահայտությունը հայերենի բաղադրյալ ժամանակաձևերում, Գ. Զահուկյանը այն ներկայացնում է ում, ել, ի/ա մասնիկներով կազմվող վերլուծական բայահիմքերի հակադրություններով⁹:

Հայագիտության մեջ, սկսած Մ. Աբեղյանից, ընդունված է անկատար և վաղակատար դերբայների միջև տեսնել գերադասյին հակադրություն: Գ. Զահուկյանը առաջարկում է նոր մոտեցում: Ոչ իրադրական ժամանակի ջահուկյանական ըմբռնման և անկատար /կատարյալ/ կատարելի կերպերի միջև, ինչ խոսք, կա իմաստային որոշակի նմանություն: Եթե գործողության անկատար կերպը ենթադրում է համընթացություն, ապա կատարյալ և կատարելի կերպերն էլ համապատասխանաբար կարող են ստանալ նախորդման և հաջորդման իմաստային երանգավորումներ: Հարցի լուծումը մեծապես կախված է կերպի քերականական կարգի ըմբռնման սկզբունքից: Որոշ լեզվաբաններ գտնում են, որ կերպի քերականական կարգը համընդհանուր քերականական կարգ է և թայս կամ այն կերպ արտահայտված է աշխարհի բոլոր լեզուներում»¹⁰:

Որևէ լեզվում կերպի քերականական կարգի բնորոշմանը պետք է մոտենալ խիստ զգույշ և հետևողական ձևով: Ամենից առաջ պետք է տարբերակել կերպը (аспект) և նրան հակադրված գործադրության բնույթ հասկացություններ, որի համար հաճախ օգտագործվում է գերմաներեն Aktionsart տերմինը¹¹: Կերպի քերականական կարգում անհրաժեշտ են խիստ հարացուցային, բնույթ կրող քերականական հակադրություններ, որոնք պետք է ղեկավարեն բայական ողջ բառաշերտը¹²: Ակնհայտ է, որ կերպի քերականական կարգը ժամանակակից հայերենում չունի այնպիսի հստակ արտահայտություն, ինչպես, ասենք, սլավոնական լեզուներում: Այն հայագիտության ամենակնճռոտ հարցերից է: Հայերենի վերլուծական ժամանակաձևերում, կարծում ենք, որ կա միայն անկատար /կատարյալ կերպային հակադրություն, որն առկա է անցյալի ոլորտում: Ըստ էության այդ հակադրությունը հանդիսանում է որպես միակ տարբերակիչ նշան միայն անկատար անցյալ և վաղակատար անցյալ ժամանակաձևերի համար և արտահայտվում է ում /ել հակադրությամբ: Այս հակադրությունը ժամանակակից հայերենում իրացվում է խիստ համակարգային ձևով և ընդգրկում է հայերենի ողջ բառաշերտը¹³, որ էական պայման է կերպի քերականական կարգի բնորոշման համար: Գ. Զահուկյանը ընդունում է, որ «անկատար «դերբայը» իրոք, անկատար կերպի արտահայտիչ է», միաժամանակ նշում է, որ «վաղակատար դերբայի դեպքում կերպային հակադրությունները դադարում են իմաստային արժեք ունենալուց»¹⁴:

7 Գ. Բ. Զահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 283:

8 Գ. Բ. Զահուկյանի առաջարկած ոչ իրադրական ժամանակ տերմինը առավել հաշորդ է հետագա շարադրանքում այն կօգտագործենք ճաշողականություն տերմինի փոխարեն:

9 Գ. Բ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 283:

10 «Вопросы глагольного вида», М., 1962, с. 7.

11 Ю. Маслов, Вопросы глагольного вида в современном зарубежном языкознании («Вопросы глагольного вида», М., 1962, с. 8).

12 Նույն տեղում, էջ 9:

13 Բացառություն են կազմում երբեք բայ՝ գալ, տալ, լալ:

14 Գ. Բ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 282:

Մ. Արեղյանը հայերենի կերպի քերականական կարգում տարբերակում է կատարվող, կատարված, կատարելի և պարզ կերպերի եզրերը¹⁵։ Նա պարզ կերպի արտահայտիչ է համարում անցյալ կատարյալ ժամանակաձևը, սակայն այն կատարյալ կերպի արտահայտիչ է և անկատար/կատարյալ կերպային հակադրության մեջ է հայերենի համադրական ձևերի հետ, որ արտահայտության պլանում բնութագրվում է առաջին հերթին ան, աց, եց, ձ, ն, շ, ր հիմքակազմ վերջնամասնիկներով, ...իսկ երկրորդաբար՝ կ/ը նախամասնիկով¹⁶։ Սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևը հայերենի անկատար և վաղակատար դերբայներով կազմված ժամանակաձևերի հետ ունի ժամանակային և ոչ կերպային հակադրություն։ Ապառնի ժամանակը ենթադրում է գործողության կատարելի ռեկրպա և ապառնու ժամանակային իմաստի (շեշտո՞ւմ ենք) յուրահատկությունն է։ Անցյալի ապառնի ժամանակաձևն էլ անցյալի ոլորտի ժամանակաձևերի հետ գտնվում է ժամանակային հաջորդականության մի շղթայում և արտահայտում է անցյալում վերցված հաշվարկման կետին հաջորդող գործողություն։ Ուստի այն ևս չի կարելի դիտել իբրև կատարելի կերպի արտահայտություն։

Ժամանակակից հայերենում քերականական ներկան արտահայտվում է մի ժամանակաձևով, որի հիմքն արտահայտում է գործողության անկատար կերպ։

Հայերենի անցյալի ոլորտի բաղադրյալ ժամանակաձևերում օժանդակ բայի միջոցով արտահայտվում է իրադրական ժամանակը։ Քննենք, թե իմաստային ինչպիսի հակադրություններ կան հիմքային արժեք ստացած ռեբրբայական՝ ձևերի մեջ։ Նախ նշենք, որ այս ժամանակաձևերի քննությունը անհրաժեշտ է կատարել օժանդակ բայի և, այսպես կոչված, դերբայական մասի միասնության մեջ և սխալ է դրանց միմյանցից առանձնացնելը։ Գնում էի և գնացել էի ժամանակաձևերը միմյանց հետ ժամանակային հակադրություններ չունեն։ Հակադրությունը ակնհայտորեն արտահայտվում է գործողության կատարման կերպի մեջ՝ անկատարություն և կատարյալություն հակադրությամբ։ Գնացել եմ և գնացել էի ժամանակաձևերը ունեն գործողության կատարյալ կերպի իմաստ։ Այս դեպքում արդեն առկա է ժամանակային հաջորդականությունը։ Գնացել եմ ժամանակաձևով արտահայտված գործողությունը կամ եղելությունը արտահայտում է համընթացություն, իսկ գնացել էի ժամանակաձևով արտահայտված գործողությունը կամ եղելությունը՝ նախորդում—անցյալ ժամանակում վերցված հաշվարկման կետին։

Նշված բաղադրյալ ժամանակաձևերի և երկրորդական բաղադրյալ ձևերի միջև Գ. Զահուկյանը տեսնում է միակատար և բազմակատար կերպային հակադրություն¹⁷, սակայն, մեր կարծիքով, միակատար/բազմակատար իմաստային հակադրությունը գործողության բնույթ (Aklionsart) հասկացության արտահայտությունն է ժամանակակից հայերենում և չի կարող քննարկվել կերպի քերականական կարգում, մանավանդ, որ այն մասնակի դրսևորում ունի և սահմանափակ բայեր է ընդգրկում¹⁸։ Անկատար և վաղակատար դերբայների կերպային հակադրությունն ընդունում է նաև է. Աղայանը¹⁹։ Չնայած հայերենում ներկայի ոլորտում կերպային հակադրություն չի իրացվում, այնուամենայնիվ, ժամանակակից հայերենի ներկա ժամանակաձևն ունի անկատար կերպի իմաստ և պետք է ընդունել կերպի քերականական կարգի հարացույցում, որը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով (տե՛ս աղ. 1)։

15 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 299—300։

16 Գ. Բ. Զահուկյան, Նշվ. աշխ., էջ 249։

17 Նույն տեղում, աղ. 32, էջ 286։

18 Նույն տեղում, էջ 253։

19 է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնհոհումը, Երևան, 1967, էջ 369։

Իսկ ինչպե՞ս է արտահայտվում ոչ իրադրական ժամանակը հայերենում։ Անհրաժեշտ է նշել, որ ոչ իրադրական (անորոշ) և իրադրական ժամանակների տարբերակումը ամենևին չի նշանակում, թե իրադրական ժամանակը, այսինքն քերականական ժամանակը՝ ճշգրտյալ ժամանակ է։ Ինչպես արդեն նշել ենք վերևում, քերականական ժամանակը ներկայանում է որպես ոչ-նշույթավորված ժամանակ. անորոշ (ոչ իրադրական) ժամանակի տարբերակումը մենք ընդունում ենք պայմանականորեն՝ նկատի ունենալով հաջորդականություն կամ վերաբերություն տերմինների անհաջող լինելը։ Ոչ իրադրական ժամանակային հետաքրքիր քննություն կարելի է կիրառել հայերենի վի-

Աղյուսակ 1

Կերպեր	Ժ ա մ ա ն ա կ ն ե ր		
	ն ե ր կ ա	ա ն ց յ ա լ	
անկատար		գրում էի, էի, էր...	
կատարյալ	գրում եմ, ես, է...	գրել եմ, ես, է...	գրել էի, էի, էր...

ճակային դերբայների ոլորտում։ Վիճակային դերբայները ցույց են տալիս ոչ թե բուն իսկ գործողություն, այլ դրա հետ իրը և ենթակա կամ խնդիր առնչվող առարկայի վիճակը²⁰։ Եվ այս առումով էլ նրանք ունեն ինչ-որ ժամանակային իմաստ, որը հստակորեն տարբերվում է ժամանակի քերականական կարգով արտահայտվող ժամանակային իմաստից։ Է. Աղայանը վիճակային է համարում ենթակայական (գրող), հարակատար (գրած), ապառնի (գրելիք), ժամանակային (գրելիս) և ձևի (գրելեն) դերբայները։ Է. Աղայանը կատարելի դերբայը դիտարկում է կերպային դերբայների մեջ, սակայն, ինչպես նշեցինք, կատարելի կերպի ընդունումը ժամանակակից հայերենում խիստ սլալանական է և ոչ այնքան համոզիչ։ Եվ հետո, կատարելի դերբայն ունի որոշակի ընդհանրություն վիճակային դերբայների հետ, քանի որ այն մասնակցում է երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությանը։ Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ կատարելի դերբայի մի տարբերակը հանդիսացող ապառնի դերբայը ընդունվում է որպես վիճակային դերբայ, ապա որոշ պայմանականությամբ կատարելի դերբայն էլ կարելի է համարել վիճակային դերբայ։ Վիճակային դերբայների մեջ տարբերակվում են երկու խումբ՝ ճշգրտյալ (ենթակայական, հարակատար, ապառնի) և մակրայական (ժամանակային, ձևի)²¹։

Սկսենք վիճակային-որոշական դերբայների քննությունից։

Գ. Ջահուկյանը նկատում է, որ ավելի ճիշտ կլիներ ենթակայական դերբայը կոչել համընթացական, հարակատարը՝ նախընթացական²²։ Իրոք, ենթակայական և հարակատար դերբայներն արտահայտում են ոչ իրադրական ժամանակային իմաստով համընթացություն և նախընթացություն կամ նախորդում։ Նշված դերբայների միջև ժամանակային հակադրություն է տեսնում նաև Է. Աղայանը. «ենթակայականն ունի ներկայի ժամանակային հատկանիշ, իսկ հարակատարը՝ անցյալի»²³։

Եթե այս դերբայների քննությանը միացնենք նաև ապառնի դերբայը և պարզենք ենթակայական, հարակատար, ապառնի դերբայների ժամանակային հակադրությունները հետևյալ համեմատություններով՝

20 Նույն տեղում, էջ 347։

21 Նույն տեղում, էջ 359։

22 Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 514։

23 Է. Ա. Աղայան, նշվ. աշխ., էջ 355։

1. Հոսող ջուր—ջուր, որ հոսում է
2. Հոսած ջուր—ջուր, որ հոսել է²⁴
3. Հոսելի(ք) ջուր—ջուր, որ հոսելու է,

ապա ակնհայտ կդառնա, որ ապառնի դերբայն էլ ունի ապառնիության իմաստ և այն կարելի է անվանել հաջորդական դերբայ։ Այս դերբայներով արտահայտված ժամանակային իմաստը խիստ տարբերվում է իրադրական ժամանակով արտահայտվող ժամանակային իմաստից։ Այն, իրոք, արտահայտում է անորոշ (ոչ իրադրական) ժամանակ, իսկ ենթակայական, հարակատար և ապառնի դերբայների միջև իմաստային հակադրությունը ընդգրկում է հայերենի բայական ողջ համակարգը։

Մակբայական դերբայներից ձևի (գրելեն) դերբայը հատուկ է խոսակցական լեզվին և որոշ բարբառների. այն չի մտնում ժամանակակից հայերենի լեզվական նորմայի մեջ, ուստի և նրա քննությանը չենք անդադառնում։ Ժամանակային դերբայը (գրելիս) մասնակցում է երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությանը և ունի համընթացության ժամանակային իմաստ։ Երկրորդական բաղադրյալ ձևերի կազմությանը նաև մասնակցում են հարակատար, կատարելի դերբայները և համապատասխանաբար արտահայտում են նախորդում և հաջորդում։ Այս դերբայներով արտահայտված ժամանակային հակադրությունը ևս ոչ իրադրական է²⁵, Դրանում հեշտ է համոզվել նույնիսկ ոչ իրադրական ժամանակի մեկ եզրի քննությամբ։

1. Գնալիս եմ լինում

2. Գնալիս էի լինում։

Ժամանակային դերբայը իրադրական ժամանակային հաջորդականության ներկա և անցյալ ժամանակակետերում արտահայտում է համընթացություն։ Հետևելով Գ. Զահուկյանին, մենք ևս ոչ իրադրական ժամանակում տարբերակում ենք երեք եզր՝ համընթացություն, նախորդում, հաջորդում։

Ըստ գործառական ոլորտի՝ անհրաժեշտ է տարբերակել ոչ իրադրական ժամանակի երկու դրսևորումներ. որոշական և պարագայական մակարդակներ, որոնցից առաջինը ներկայացվում է ենթակայական, հարակատար, ապառնի, իսկ երկրորդը՝ ժամանակային, հարակատար, կատարելի դերբայների հակադրություններով։ Ոչ իրադրական ժամանակի համակարգը ժամանակակից հայոց լեզվում կարելի է ներկայացնել հետևյալ ձևով (տե՛ս աղ. 2)։

Ոչ իրադրական ժամանակի այսպիսի ըմբռնումը մեզ ընդունելի է թվում հետևյալ պատճառներով։

ա. վիճակային դերբայներն ունեն ինքնուրույն կիրառություն

բ. վիճակային դերբայները վերաբերում են լեզվի առարկայական-իմացական պլանին, ինչը Գ. Զահուկյանը ոչ իրադրական ժամանակի համար համարում է կարևոր պայման²⁶։

Մնում է պարզել՝ ոչ իրադրական ժամանակը պետք է համարել առանձին քերականական կարգ, թե՞ ժամանակի կարգի ենթակարգ։ Ոչ իրադրական ժամանակը լեզվում ժամանակային հարաբերությունների դրսևորման մի ձև է։ Այն էապես տարբերվում է թե՛ իրադրական ժամանակից և թե՛ լեզվում ժամանակ արտահայտող այլ միջոցներից (ինչպես՝ այսօր, երեկ, ժամը մեկին և այլն)։ Եթե այն քննարկվի լեզվի ժամանակայնության դաշտի մակարդակով, ապա լիովին կարող է դիտվել իբրև առանձին քերականական

²⁴ Նույն տեղում։

²⁵ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 286։

²⁶ Նույն տեղում, էջ 283։

կարգի Եթե ի նկատի առնվի իրադրական ժամանակի հետ նրա ընդհանրության եղրերը՝ ոչ-նշույթավորված լինելը, համընթացության, նախորդման և հաջորդման եղրերի հակադրամիասնության ընդհանրությունը, ապա այն

Աղյուսակ 2

Ոչ իրադրական ժամանակ	Կիրառական ոլորտ	
	որոշական	պարազայական
համընթացություն	հոսող (շուր)	գնալիս (եմ, էի լինում)
նախորդում	հոսած (շուր)	գնացած (եմ, էի լինում)
հաջորդում	հոսելիք (շուր)	գնալու (եմ, էի լինում)

սկետը է դիտել իբրև ժամանակի քերականական կարգի ենթակարգ։ Ամեն ինչ կախված է քննության մակարդակից, իսկ ներկա քննության առումով այն ներկայանում է որպես ժամանակի քերականական կարգի ենթակարգ։

ПРОЯВЛЕНИЕ НЕ СИТУАТИВНОГО ВРЕМЕНИ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЗОГРАБ ЧАГАЯН

Резюме

Представляет интерес анализ семантических противопоставлений среди временных форм современного армянского языка. Во временных формах сферы прошедшего наблюдаются временные противопоставления, которые связаны с принципом принятия точки отсчета в прошедшем времени. Во временных формах *վաղակատար* и *անկատար անցյալ* при помощи основ «причастий» выражается видовое противопоставление—совершенный/несовершенный, имеющее строго парадигматический характер и охватывающее всю глагольную лексику. Категория не ситуативного (неопределенного) времени в современном армянском языке проявляется противопоставлением причастий состояния. В плане содержания дифференцируются атрибутивные и обстоятельственные уровни.